պատճառաւ, դաշնագիրը կնքող տէրութեանց այդ նկատմամբ մինչև ցարդ բան մը չէր ծանուցած։ Իսկ այժմ կայսերական կառավարութիւնն այս մասին Պէյքը փաշայի և այլ պաշտօնատարաց ձեռամբ պէտք եղած քննութիւններն ամբողջացուցած լինելով, որոշած է հետևեալ բարենորոգումներն ի գործ դնել.

„Ա.—Ժողովրդեան ապահովութիւնն երաշխաւորելու համար Կարնոյ, Վանայ, Խաղէշի և Տիարպէքիրի նահանգաց մէջ դատարանք առաւել ևս պիտի բաբնորոգին և լաւագոյն կազմաւորութիւն մը պիտի ստանան։ Մինչև մ՚այս գործին համար պիտի նշանակուի։

„Բ.—Պայսերական կառավարութիւնը տէրութիւններն խնդրուելիք երաշխաւորութեան տրուելուն թուականէն հաշուելով երեք ամսուան պայմանաժամու մէջ, յիշեալ նահանգաց ներքին խաղաղութեան պահպանութիւնը բաւական լինելիք ոստիկան զինուորութիւն (Ժանտարմա) և ոստիկանութիւնը (Ոլիս) պիտի կազմէ։

„Գ.—Ոստիկանութեան Վալայ պէյի կոչուած մեծ հրամատարները պատերազմական նախարարութենէն պիտի անուանին. իսկ ոստիկանութեան միւս սպայք, մասնաւոր կանոնագրոյն համեմատ, Վալայ Մէհէլիսի կոչուած խորհուրդներէն պիտի ընտրուին, և կուսակալաց առաջարկովը պատերազմական նախարարութենէն պիտի անուանին։ Կուսակալք բնականաբար արտօնութիւն պիտի ունենան ոստիկանական զօրութիւնը նահանգին մէջ իրենց ուզած տեղերը գործածել, և երբ անկարող Վալայ պէյերուն և ուրիշ սպայից պաշտօնանկութիւնը խնդրեն, պատերազմական նախարարութիւնը պիտի ընդունի նոցա խնդիրքը“։

«Գ.—Նահիկներու (գիւղախումբ) կազմութեան համար Բ. Դրան (Պէպտին փաշային) յուլիս 5 թուականաւ ծանուցագրոյն մէջ բացատրուած դրութիւնը՝ կայսերական կառավարութեան շահուց համաձայն կերպիւ չորս ամսուան պայմանաժամի մէջ ի գործ պիտի դրուի։»

„Դ.—Ալբոյիշլաղ նահանգաց մէջ, մաքսատուրքն, անուղղակի տուրքերը, հեռագրատան և թղթատարութեան հասոյթներն ի բաց առեալ, մնացեալ եկամուտներէն նախ իւրաքանչիւր նահանգի պաշտօնատարաց ամսականներն և ուրիշ վարչական կարևոր ծախքերը պիտի տնօրինուին։ Մնացած հասոյթէն 100-ին 10-ը հասարակային կրթութեան և հանրօգուտ շինութեանց պիտի յատկացուի, իսկ 100-ին 90-ը Կ. Պոլիս պիտի ղրկուի։»

„Ե.—Նահանգային պաշտօնատարաց մէջ դատական պաշտօնատարաց ընտրութիւն և անուանումը մասնաւոր կանոնագրոյն համեմատ ի գործ պիտի դրուի։ Քաղաքային պաշտօնատարաց ընտրութիւն և անուանումը կուսակալաց առաջարկութեան վրայ կայսերական Իրատէով պիտի կատարուի։ Բայց Մէխէսարրքֆ-ներէ (կառավարիչ), Տէֆթէրտարներէ (հաշուակալ) և Մէքթուպճիներէ (առաջին քարտուղար) զատ միւս պաշտօնատարաց փոփոխումն և նշանակումը, մասնաւոր կանոնաց սահմանին մէջ, կուսակալաց ձեռնհասութեան կը վերաբերի։ Ցիշեալ նահանգաց մէջ պաշտօն վարելիք անձանց լոկ կարողութիւն ու պարկեշտութիւն ի նկատ պիտի առնուին, և Պէրլինի դաշնագրին 62-րդ յօդուածին և տէրութեան ներկայ օրինաց համեմատ, այդ հանգամանքներն ունեցող ամէն կարգի հպատակներէ պաշտօնատարներ պիտի ունենան։

„Զ.—Նիզամիէ դատարանաց մէջ Մէճլիսէն և տէրութեան ուրիշ կանոնագրերը կերպարութիւն պիտի ունենան“։

(Մ ա ա ֆ)

ՖՐԱՆՍԻԱ.

—

Լրագիրներուն մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Փարիզից։ Կարմելիտների և բարնաբիտների արտաքսելը նոյն հետևանքներէ է հայցնում, ինչ. որ եզուիտների արտաքսելը. ամէն տեղ վնասած միաբանութիւնները դատ են սկսում պրէֆեկտների, պոլիցիական կօմիսարների և վարչութեան այլ ներկայացուցիչների դէմ, որոնք մասնակցել են նրանց բնակարանների իրաւունքների խախտելուն։ Ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ պրօկուրօրները, նրանց օգնականները և հաշտարար դատաւորները խումբերով հրաժարականներ են տալիս, որպէս զի կառավարութեան հրամանները կատարելու ժամանակ պատասխանատու չը դառնան օրէնքը խախտելու համար։ Առաջվայ պէս կառավարութիւնը դրանց հրաժարման խնդիրները չէ ընդունում և ծառայութիւնը թողնել ցանկացողներին արձակում է խումբերով։ Հետաքրքիր է այն իրողութիւնը, որ ծառայութիւնը թողնող պրօկուրօրներից շատերը նշանակված են 1880 թուականին արդարութեան այժմեան մինիստրից։

Պոլիցիականներն էլ վախենում են գանգատներից և ուելի լաւ են համարում թողնել ծառայութիւնը։ Ֆրանսիական օրէնքները իրաւունք են տալիս վարչութեան պատճառով վնաս կրողներին կամ բռնութիւնը ենթարկվածներին գանգատվել 30 տարվայ ընթացքում և բաւականութիւն պահանջել։ Իսկ այդ 30 տարիների ընթացքում քանի անգամ կարող է փոփոխվել Ֆրանսիական կառավարչական ձևը։ Պրէֆեկտներից շատերը բաւական կարողութիւն ունենալով, երկիւղով են նայում իրանց սպառնացող հաշտանքին։

Մի քանի քաղաքներում հոգևոր միաբանութիւնների արձակելը տեղիք տուց անկարգութիւններին։ Ռենի մէջ հարկաւոր եղաւ զօրքեր հրաւիրել ամբոխը հեռացնելու համար, որ հաւաքվել էր կարմելիտներին պաշտպանելու նպատակով։

Հրկէն երեք օր է, որ Մարսելի մէջ ամբոխը շրջապատել է կապուցիների վանքը և պոլիցիային թոյլ չէ տալիս մտնել ներս։ Նրանք այդտեղ էլ զօրքեր հարկաւոր կը լինեն։ Մօնպելիէի մէջ զգեստաւորված եպիսկոպոսը մտաւ պրէֆեկտի գրասենեակը և յայտնեց նրան եկեղեցուց մերժված։ Ռօշֆոր, Փարիզի և ուրիշ քաղաքների մէջ ուսումնարանական տեսուչները հրաման ստացան մտնել եզուիտների նախկին ուսումնարանների մէջ և դատաւորներին քննել։ Որտեղ կը գտնվեն նախկին ուսուցիչները, տեսուչները պէտք է կազմեն պրօտօկոլներ, իսկ յետոյ ակադեմիական խորհուրդը նրանց հեռացնելու համար հարկաւոր կարգադրութիւններ կը տայ։ Բացի այդ եթէ վանքերից մէկի մէջ պոլիցիան գտնում է օտարազգիներին, իսկոյն հրամայում է նրանց 24 ժամվայ ընթացքում հեռանալ Ֆրանսիայից։ Հա այսպիսի պատկեր է ներկայացնում Ֆրանսիական կառավարութեան գործունէութիւնը— արգելված միաբանութիւնների վերաբերութեամբ։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ.

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Աւստրիական կայսր Ֆրանց Յովսէփի գահական ճառի այն մասը, որ յիշում է արևելեան գժուարութիւնները, չափազանց ճարպիկութեամբ է կազմված։ Անբայան հետևօրը կարողացաւ մի քանի որոշ նախադասութիւններ ասել Եւրօպային զբաղեցնող դիխաւոր հարցի մասին և մի և նոյն ժամանակ պահպանել իր գործողութիւնների ազատութիւնը Բերլինի մէջ։ Այն նախադասութիւնը, թէ «չը նայելով ժամանակաւոր դժուարութիւններին, Աւստրօ-Ունգարիայի յարաբերութիւնները միւս բոլոր պետութիւնների հետ բարեկամական են», ասված է ունգարացի թիւրքասէրների համար, որոնք չափազանց վրդովվում են, երբ մտածում են, թէ Աւստրօ-Ունգարիան, միանալով միւս պետութիւնների հետ, կարող է ստիպել Թիւրքիային հնազանդվել Եւրօպայի կամքին։ Այդ նախադասութենից յետոյ կայսրը ասում է, որ ինքը ամէն միջոցներ գործ կը դնի խաղաղութիւնը և իր երկրի շահերը պաշտպանելու համար։ Այս նախադասութեանը դիտմամբ երկդիմի միտք է տուած։

Թիւրքիայի կուսակիցները, որոնք հաւատացած են, թէ Աւստրօ-Ունգարիայի շահերը պահանջում են Թիւրքիայի ամբողջութեան պահպանելը, կարող են այդ նախադասութիւնը այնպէս մեկնել, որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը պատրաստ է զոհել Խերլինի դաշնագրի գլուխ ևս չերագրոված մի քանի վճիռները, եթէ այդ հարկաւոր կը լինի թիւրքաց կայսերութիւնը ազատելու համար։ Իսկ այն շրջանները, որոնք կամենում են Խալիֆայութեան թերակղզու արևմտեան մասը միացնել Աւստրօ-Ունգարիայի հետ, կարող են մտածել, որ կայսրը ակնարկում է թիւրքաց կայսերութեան բաժանման վրա Աւստրօ-Ունգարիայի շահերի համեմատ։ Այս շրջանների համար հետաքրքիր է նոյնպէս և այն իրողութիւնը, որ կայսրը ասաց, թէ գործերի դրութիւնը Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ բաւականացուցիչ է, թէ այդ նահանգների մէջ եղած աւտրիական զօրքերի թիւը փոքրացրած է և վարչական ծախսերն էլ պակասեցրած են։

Աւելի հիմնաւոր կը լինի այն ենթադրութիւնը, որ կայսրի գահական ճառը մէջտեղ է տալիս աւտրիական կառավարութեանը պահպանել գործողութիւնների ազատութիւնը, որովհետև այժմ ինքը կառավարութիւնը չը գիտե, թէ արևելեան գործերի մէջ ինչպիսի նախագծի պէտք է հետևել։ Աւստրօ-Ունգարական կուսակցութիւնների դրութիւնը այնպէս է, որ այդ հարցը դեռ ևս անհնարին է վճռել։ Տաաֆէի մինիստրութիւնը, փորձելով հաշտեցնել զանազան կուսակցութիւնները, այն հետևանքի հասաւ, որ զրգռեց իր դէմ թէ գերմանական սահմանադրական կուսակցութեանը և թէ լեհացիներին։ Աւստրիական բոլոր կուսակցութիւնները ապասում են ունգարացիների օգնութեանը, և նայելով թէ ունգարացիները որ կուսակցութեան հետ կը միանան, Աւստրօ-Ունգարիայի քաղաքականութիւնը բացարձակ կամ թշնամական կը լինի Թիւրքիային, կամ բարեկամական։

Գործերի այսպիսի անորոշ դրութիւնը չ՚նկատի ունենալով, աւելի էլ ցանկալի է, որ կայանայ Անգլիայի և Ֆրանսիայի այն միութիւնը արևելեան հարցի պատճառով, որի մասին վերջին ժամանակները անընդհատ խօսում է եւրօպական մամուլը։ Ֆրանսիական կառավարութիւնը պէտք է հասկանայ, թէ հէնց որ Անգլիայի կողմը կը լինի պետութիւնների մեծամասնութիւնը, Աւստրօ-Ունգարիան կը միանայ այդ մեծամասնութեան հետ և կանջատվի Գերմանիայից, որը բացարձակ պաշտպանում է Թիւրքիային։

Ուրեմն՝ ինչենայից, այլ Փարիզից է կախված արևելեան գործերի ապագայ ընթացքը։ Դ՚զուր չէ, որ վերջին օրերումս „Times“ լրագիրը անընդհատ պնդում է, որ Անգլիան այն ժամանակ միայն կարող է գործնական ազդեցութիւն ունենալ յունական խնդրի լուծման ժամանակ, երբ Ֆրանսիան նրա հետ համաձայն կը գործէ։ Երեւօք կը հասկանայ Բարտելեմի Սենտ-Իլէր այս ակնարկութիւնների նշանակութիւնը և կը կարողանայ արդեօք նրանցից օգուտ քաղել իր նախորդի սխալները ուղղելու համար։

ԹԻՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ

—

Օսմանլը անուն Ֆրանքօ-Թուրք լրագրին իւր վերջին թուոյն մէջ բարենորոգումից վրայ յօդուած մը հրատարակելով, Տէպա լրագրին նոյն խնդրոյն զրված մի յօդուածն հերքել կուզէ, և հետևեալ տողերը կը գրէ, որք ուղղակի Հայոց կը վերաբերին։

«Տէպայի խորհրդածութեանց մէջ յիշված յօդուածն Հայաբնակ գաւառաց խօսքը կընէ. բայց Հայք ամէն տեղ ցրուեալ են. Փոքր Ասիոյ, ինչպէս նաև Եւրոպական Թուրքիոյ և Դիպլոմոսի մէջ Հայեր կը տեսնուին։ Ուրեմն միայն Հայաբնակ գաւառաց համար բարենորոգումներ խնդրել անտեղի և անիմաստ բան մ՚է։ Մինչդ զատ, մինթէ Հայք Թուրքիոյ մէջ բնակող միակ քրիստոնեայներն են, և ի նպաստ Հայոց յանկարծ ցոյց տրուած այս համակրութիւնն ո՛չ միայն Իպամներին, այլ նաև Եւրոպիոյ միւս քրիստոնեաները չը կընա՞ դժգոհացնել։

«Իբր թէ առկախ խնդիրները չէին բաւեր Արևելից վերածնութիւնն արգիլելու, հաւատակի Հայական խնդիր մ՚ալ կը սպառնան մեզ, որ արուստաբար երևան հանուած է։ Բայց չը մտածուիր թէ այդպիսեաւ փոխանակ Հայոց վիճակը բարւոքելու, առաւել ևս կը ծանրացնեն զայն. զի երբ խնդիր մ՚ևս առկախ կը մնայ, առաւել ևս երկարաձգի այն տագնապն, որ բարգաւաճման և նիթեկան բարեկեցութեան ամէն աղբիւր կը ցամքեցնէ։

«Մինչ առաջ, երբ Հայք նուազ ձանչուած էին Եւրոպիոյ մէջ, երբ իրենք իսկ նուազ հակամէտ էին այս օրուան յեղափոխական գաղափարաց, յայնժամ լաւագոյն կացութիւն մ՚ունէին։ Տէրութեան բոլոր հասարակային և անհատական երևմուքն իրենց ձեռք էին։ Իրենց ձեռքն էր այսօր երկրին ամենամեծ սեղանաւորները լինել. բայց երևակայական գաղափարներ այդ հասարակութեան երիտասարդաց մի մասին գլուխը պաշարելէ ի վեր, Հայեր կը տեսնուին, որք արհեստից, սեղանաւորութեան և վաճառականութեան շահաւէտ ընթացքներ մէկ կողմն կը թողուն իրենք զերենք քաղաքականութեան բաղդատնդրական գործերու մէջ նետելու համար, որք վատնդաւոր են թէ երկրին ապագային և թէ իրենց, իսկ իրենք առ այժմ աւելի ևս դժբաղդ կը լինին։

«Բաղմաթիւ դարերէ ի վեր անհետա-